

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՍՐԲԱՏԱԾ ԿՈՆԴԱԿԸ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՕԾՄԱՆ 1700-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ**

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՄԻ ԶՐԻՍՏՈՍԻ,
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ
ԵՂԻՍԿՈՂՈՍԱԴԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ,
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ՆԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ
ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒԴԻԿԷ ԷԶՄԻԱԾՆԻ**

**ՔՐԻՍՏՈՍԱՄԲԱՆԴ ՄԻՐՈՅ ՈՂԶՈՅՆ ԵՒ ՕՐՆՈՒԹԻՒՆ
ՆԱՅՐԱԴԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻՒԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ,
ՊԱՏՐԻԱՐԺՈՒԹԵԱՆՅ ՆԱՅՈՑ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՄԱՂԻՄԱՅ ԵՒ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՂՈՒՍՈՅ, ԱՐՔԵՂԻՍԿՈՂՈՍԱՅ, ԵՂԻՍԿՈՂՈՍԱՅ,
ՎԱՐԴԱԴԵՏԱՅ, ՔԱՆԱՆԱՅԻՅ ԵՒ ՍԱՐԿԱՄԱԳԱՅ, ԹԵՄԱԿԱՆ
ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՆԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ԽՈՐՆՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՅ ԵՒ ՄԻՐԵՅԵԱՆ ՆԱՄԱՅՆ ՆԱԽԱՏԱՅԵԱՆ
ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՆԱՅՈՑ**

*«Ի վերայ Աջոյն եւ Սրբոյ Էջմիածնի
ամենայն ազգն Նայոց կապեալ կան»:
(Առաքել Դատրիժեցի)*

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ հայոց ի Նայասարան եւ ի Սփիւռս.

Կաթողիկէ Սուրբ Էջմիածնի՝ հայոց Մայր Աթոռի 1700-ամեայ յոբելեանով պսակեալ
յօնական փարի է սկսուել, որ նոր հոգեւորագութեամբ գալիս է լրացնելու հայութեան
կեանքի նոր հազարամեակը բացող յոբելեանների պսակը: Աստուծոյ ողորմած կամքով եւ
ամենառաւոյ շնորհով Լուսաւորցի Գահից 2003 թուականը ազգային-եկեղեցական մեր
կեանքում հռչակում ենք Աստուածակառոյց Սուրբ Էջմիածնի փարի:

Մեր հայեացքը վերադառնում ուղղուել է դէպի Նայոց Մեծ Դարձի հաւաքակերպ ժամանակ-
ները: Մեր աչքերի առջեւ 301 թուականի խորախորհուրդ այն գիշերն է, երբ քրիստոնե-
ւորները պէտքական կրօն հռչակած Նայասարանի Վաղարշապատ մայրաքաղաքում «յան-
կարծակի եղել ձայն սաստկութեան, բոմբին որոտման, ահաւոր թնդին, իբրեւ զձայն
եռանդեան կուրակելոյ ծովու ալեաց խռովութեան, եւ բացաւ խորանաշէն յարկն հասարա-
կութեան երկնից» (Ագաթանգեղոս): Բացուեց երկինքը, եւ աստուածային լոյսը՝ հորդա-
ռաւ ողողեց դաշտն Արարարեան: Լոյսերի մէջ, զուարթունների գնդերի հետ, ի փես Նա-
ւաւոյ մեր Նայր Սուրբ Գրիգոր Լուսաւորցի, իջաւ Որդին Միաձին ու Ամենակեցոյց Աջում
բռնած մուրճով «բաղխեաց զթանձրութիւն լայնաւարած գետնոյն» եւ զծագրեց ոսկեխա-

րիսխ Շողակաթ Սուրբ Էջմիածինը: Տաճարի լուսանկար կերպրածքից վերև հնչեց պարգամը Բարձրեալի. «Եւ րեղին այն լիցի փաճար Աստուծոյ եւ փուն աղօթից խնդրածոց ամենայն հաւաքացելոց եւ Աթոռ Քահանայապետութեան» (*Ագաթանգեղոս*):

Աստուած կնքեց մեր հողը, դրեց խարխիս հաւարի ու կապեց կամար Սրբազան Ուխտի: Աստուծոյ Կամքին խոնարհեալ, Փրկչի Էջքի հաւարը շաղախ դարձրած՝ նորագործ մեր սուրբ նախնիները հաստատեցին Աթոռն Ամենայն Հայոց Քահանայապետութեան եւ խնդալից փութով ու երկիւղածութեամբ 303 թ. կանգնեցին առաջին շինուածքը Մայր Տաճարի: Կանգնեցին գմբեթն Աստուածաբնութեան՝ փրկարար ու պահապան խաչը վրան, որ վեր բարձրացաւ դէպի Հայոց աշխարհին բացուած խորանաշար դռները երկնքի: «Կաթողիկէ մեզ կառուցեալ, անվանելի ի դրանց դժոխաց, իւղովն օծման գերաւելեալ Մայր պաշտելի, Սուրբ Էջմիածին» (*Պաղտատար Դպիր*):

Սուրբ Էջմիածնով Մասեաց սրբորդի հարթութեան վրայ նոյնացաւ Կամքն Աստուծոյ եւ կամքը հայոց: Նոյեան փապանի դիմաց հանգրուանեց հայ ժողովրդի փրկութեան փապանը՝ Հայաստանեայց Եկեղեցու Միածնաւէ Մայր Աթոռը, որի մկրտութեան առազանի միառնալոյսը հոգետը նոր ծնունդ փութեց մեր ժողովրդին եւ դարձաւ նոր աւիշ հին արմաքին հայոց՝ բնիկ իր հողում ապրելու եւ յարարելու: Քրիստոսադոշմ մեր հաւաքքը նոյնացաւ մեր ինքնութեան հետ: Սուրբ Էջմիածինը դարձաւ հոգետը Հայրենիքը հայոց ու վառ պահեց հայ կեանքի սէրը եւ փեսիլքը՝ կորցրած անկախ պետականութեան վերականգնման: Պարտութեան դժուարին ուրբաններում ու փորձութիւնների մէջ Մայր Աթոռից բաշխուող սէրը եւ փրկութեան հաւարը յուսադրեցին ու զօրացրին հայ հոգիները, համախումբ ու միաբան պահեցին հայոց փոքր ածուն, որի գոյութիւնը դարերով վրանգուած էր թէ՛ բռնագրաւուած Հայրենիքում, թէ՛ նրանից հեռու, օտար ափերում: Որքան մեծ եղան աղէտները, այնքան առաւել զգալի եղաւ Սուրբ Էջմիածնի պահապան զօրութիւնը: Որքան հեռուները սիւռնեցիք, այնքան առաւել րեսանելի եղաւ ու ջերմացրեց մեզ Իջման Սուրբ Սեղանից ճառագող լոյսը, որ Աստուծոյ Էջքի փեսիլքով վերածննդի նոր հաւար, կամբ ու ձգքում յաւելեց մեր ժողովրդին: Սուրբ Էջմիածնի Շողակաթ լոյսն է հայոց բոլոր եկեղեցիների կանթեղներում եւ Լուսաւորչի Սուրբ Միւռնը՝ մկրտութեան առազաններում, որ բաշխում են շնորհը հայրենեաց ժառանգութեան որդեգրութեան: Ամեն հայի համար անվերապահ միեղէն սրբութիւն է Սուրբ Էջմիածինը, հայ ու քրիստոնեայ ապրումի պարունակը. «Այս փաճարի մէջ է հայի ազգութեան սիրտը՝ Իջման րեղը. սիրի Էջմիածինը, ներս մտիւր, համբուրիւր Իջման րեղը ու դու համբուրած կլինես րիեզերքի վրա րարագիր ցրուած ամբողջ ազգ» (*Պեղն Պոռնիս*): Այսպէս գիտենք Սուրբ Էջմիածինը եւ այսպէս ենք ճանաչեցրել այլոց: 17 դար գիտենք հայ հոգու զօրութեան ակունք ու զանձարան, ազատութեան սէր ու դրօշ, հայ հոգու պարծանք ու յաղթութիւն, գիտենք մեզ Մայր պաշտելի՝ գորովագութ սիրով մեզ շաղկապող, սիրոյ մէջ հաստատող ու պահպանող: Սուրբ Էջմիածնի ոգու ծնունդն են Մաշտոցն ու Թարգմանեաց դասը, Ոսկէ, Արծաթ եւ հանճարածնունդ բոլոր դարերը հայոց, Վարդանն ու մեր պատմութեան բոլոր Վարդանանք, Արարայրն ու մեր բոլոր գոյամարտ Արարայրները, հայոց անկախութեան նոր այգաբացը լուսաւորած Մարդարապարն ու Արցախեան ազատամարտը: Այս ըմբռնումով մեր հայրերը շարունակ նորոգել ու բարեգարդել են Մայր Տաճարը հայոց, հրաշալի փեսիլքի նմանութեամբ գեղեցկադիր շինուածքով պահպանել ժամանակի ատրիճ հողմերին յանդիման: Սուրբ Էջմիածնից հեռու Հայոց Հայրապետները, ինչպէս Սուրբ Ներսէս Շնորհալին, իրենց զգացել են րարագիր ու անմխիթար, քանզի հայ հոգին իր հաւարի օրրան, իր յարաբնութեան խորհուրդ ու կեանքի

քաջալերության, իր Մայր Աթոռը ճանաչել է միշտ հայրենեաց հողին երկնքից իջած Սուրբ Էջմիածինը. «Ի վերայ Աջոյն եւ Սրբոյ Էջմիածնի ամենայն ազգն Հայոց կապեալ կան»:

Նախախնամութեան Կամբով 1441 թ. Հայրապետական Աթոռը, երկարապետ դեգերումներից յետոյ, վերահաստատուեց Միածնաէջ իր Կեղում՝ ժամանակի նոր փորձությունների մէջ հաւաք ու յուսացեալ պահպանելու իր հօսքը եւ հովուելու դէպի յոյսի ու յաղթութեան նոր եզերքներ:

Սուրբ Էջմիածնի 1700-ամեակի խնդրութեամբ ողջոյն եւ հրաւեր ենք յղում Հայ Եկեղեցու Նուիրապետական Աթոռների շնորհագարդ Գահակալներին, բարեջան թեմակալ Առաջնորդներին, ուխտապահ ողջ հոգևոր դասին եւ հաւաքաւոր սիրեցեալ համայն մեր ժողովրդին: Այսօր մենք ենք կրողները Սուրբ Էջմիածնի խորհրդի եւ շնորհընկալները՝ Կոնստանդնուպոլսի հայոց Մայր Տաճարի 1700-ամեայ յորելեանը: Հաւաքարիմ ինքներս մեզ, Էջմիածնադուռ մեր հոգուն՝ հաւաքաւոր, ազգահաւաք ու հայրենաշէն գործերով նշանաւոր ենք հայ կեանքի այս մեծ իրադարձութիւնը: Մեր հայրերի օրինակով բանուկ պահենք դէպի Սուրբ Էջմիածին հայոց ուխտի ճանապարհը: Հպունք մեր նախնեաց աղօթքի ջերմութիւնը պահած քարերին, զգանք հաւաքով կենսունակ մեր արմատները եւ փառաբանենք Աստուծոյ նոյն սիրով ու հաւաքարմութեամբ, ինչպէս Սուրբ Էջմիածինը կառուցած, Սուրբ Էջմիածինը պահպանած մեր պապերն ու հայրերը, որպէսզի մեզանով միշտ պայծառ լինի հայոց Մայր Աթոռը եւ՝ նրանով՝ զօրացեալ ու միաբան հայ կեանքը: Ծնրադռներ Իջման Սուրբ Սեդանի առջեւ եւ գոհաբանական աղօթքով ասենք. Փառք Զեզ, Տէր, որ անսպունք յոյսիդ երկնացող ճառագայթներով ճարտարապետեցիր ու գծագրեցիր Մայր Տաճարը մեր հաւաքի: Առաքաջրու Շողակաթ լոյսերի հետ մեր հողին ու մեր հոգիներին իջնող Շնորհդ եւ օրհնիդ, որ մենք հաստատուն մնանք Սուրբ Էջմիածնով ազգային մեր կեանքը լուսաւորած հաւաքի ճանապարհին: Զո խաղաղութեան ու արդարութեան մէջ պահպանիր աշխարհը համայն, Հայաստան եւ Արցախ հայրենի երկիրը մեր, ազգս հայոց ու Եկեղեցիս Հայաստանեայց՝ Նուիրապետական իր Աթոռներով: Ամենակալ Տէր, անսասան պահիր Զո իսկ հիմնած Մայր Աթոռը Ամենայն Հայոց, որ միշտ լինի բազմամարդ քուն աղօթից եւ շնորհակիր Աթոռ Քահանայապետութեան, քանզի «Ի վերայ Աջոյն եւ Սրբոյ Էջմիածնի ամենայն ազգն Հայոց կապեալ կան»:

«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեսնն մերոյ Յիսուսի Զրիստոսի եղիցին ընդ մեզ եւ ընդ ամենեւեան: Ամէն»:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅԵՆ ՀԱՅՈՅ

Տուա Կոնդակս ի 30-ն Յունուարի

Յամի Տեսնն 2003 և ի թուին Հայոց ՌՆԾԲ

ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի

ընդ համարաւ 124